ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

# Հ Ր Ա Մ Ա Ն Ը

«20» դեկտեմբերի 2018 թվականի № 188-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի №46-Ն որոշմամբ հաստատված հավելված №1-ի 16-րդ կետի պահանջի կատարումն ապահովելու նպատակով.

**Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներին առնչվող 2019 թվականի հիմնական միջոցառումների պլանը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ, զորահավաքային մարմնի ղեկավար Տիգրան Արմենի Արզումանյանին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

12/20/2018

X

VERIFIED OCSP 20-Dec-18 17:17:08 GMT+4

Signed by: BAGHRAMYAN GAREGIN 3207770118

Հավելված
Հայաստանի Հանրապետության
էներգետիկ ենթակառուցվածքների
և բնական պաշարների նախարարի
2018թ. դեկտեմբերի «20» № 188-Ա հրամանի

# ՊԼԱՆ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| ՀՀ | Միջոցառումը և թեման | Կատարման ժամկետը | Պատասխանատու | Կատարողներ | Մասնակիցներ | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| **I ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ** | | | | | | |
| 1.1 | Մասնակցություն ՀՀ ԱԻՆ «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ում անցկացվող վերապատրաստման դասընթացներին | Ըստ տարվա ժամանակացույցի | Նախարարի տեղակալ | Ջրահավաքային բաժին | Նախարարություն և էներգահամակարգի ընկերություններ | |
| 1.2 | Մասնակցություն ՀՀ ԱԻՆ-ի կողմից անցկացվող սեմինար-պարապմունքներին, խորհրդակցություններին և դասընթացներին | Համաձայն ՀՀ ԱԻՆ աշխատանքային պլանի | Նախարարի տեղակալ | Ջրահավաքային բաժին | Ջրահավաքային բաժնի աշխատակիցներ | |
| 1.3 | Մասնակցություն ՀՀ ԱԻՆ «Աղետների բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ում «Առաջին բուժօգնություն» ընդհանուր մասնագիտական դասընթացների անցկացում | Կիսամյակը մեկ անգամ | Նախարարի տեղակալ | Ջրահավաքային բաժին | ՔՊ առաջին բուժօգնության խմբի անձնակազմ | |
| 1.4 | Հրդեհային անվտանգության հարցերով հրահանգչամեթոդական պարապմունքների անցկացում | Կիսամյակը մեկ անգամ | Նախարարի տեղակալ | Ջրահավաքային բաժին | Նախարարություն և էներգահամակարգի ընկերություններ | |
| **II ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ** | | | | | | |
| **2.1 Շտաբային ուսումնավարժություն** | | | | | | |
| 2.1.1 | «Ուժեղ երկրաշարժի դեպքում աշխատակիցների պաշտպանության միջոցառումների իրականացումը և կազմակերպումը» | Հունիսի առաջին տասնօրյակ | Նախարարի տեղակալ | Ջրահավաքային բաժին | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 2.1.2 | «ՔՊ ղեկավար կազմի կողմից ՔՊ համակարգի պատրաստականության բերման միջոցառումների իրականացումը» | Սեպտեմբերի երրորդ տասնօրյակ | Նախարարի տեղակալ | Զորահավաքային բաժին | | |
| **2.2 Հատուկ տակտիկական ուսումնավարժություն** | | | | | | |
| 2.2.1 | «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից՝ «Հակառակորդի կողմից իրականացված դիվերսիոն գործողությունների արդյունքում ընդհատված էլեկտրամատակարարման վերականգնում: Գործարար գործընթացի անընդհատության ապահովում» թեմայով | Հունիսի առաջին տասնօրյակ | ՔՊ պատասխանատու | «ՀԷՑ» ՓԲԸ | ՔՊ շտաբի անդամներ, ՔՊ կազմավորումներ | |
| 2.2.2 | «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Երևանի ԳԳՄ Շենգավիթի սպասարկման տարածքում գազի արտահոսքի պատճառով առաջացել է գազի կուտակում շենքի նկուղային հատվածում, որի հետևանքով տեղի է ունեցել պայթյուն» թեմայով | Սեպտեմբերի առաջին տասնօրյակ | ՔՊ պատասխանատու | «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ | ՔՊ շտաբի անդամներ, ՔՊ կազմավորումներ | |
| **3. Ընդհանուր պատրաստություն** | | | | | | |
| 3.1 | ՔՊ միջազգային օրվան նվիրված սեմինար «ՔՊ խնդիրները, դերն ու նշանակությունը համապետական պաշտպանական միջոցառումների համակարգում» թեմայով | Մարտի առաջին տասնօրյակ | Նախարարի տեղակալ | Զորահավաքային բաժին | Նախարարություն և էներգահամակարգի ընկերություններ | |
| 3.2 | Սեմինար «Աղետների, հրդեհի և ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը: Նախարարության գործառույթները ուժեղ երկրաշարժի և աղետների ժամանակ» թեմայով | Սեպտեմբերի առաջին տասնօրյակ | Նախարարի տեղակալ | Զորահավաքային բաժին | Նախարարության աշխատակիցներ | |
| 3.3 | «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և ՔՊ հիմնահարցերով Նախարարության աշխատակիցների և ՔՊ կազմավորումների ուսուցում» | Համաձայն ուսումնական ծրագրի | Նախարարի տեղակալ | Ուսումնական խմբերի ղեկավարներ | Նախարարության աշխատակիցներ | |
| **4. Պլանների և ծրագրերի մշակում** | | | | | | |
| 4.1 | 2018 թվականի ԱԻ և ՔՊ ոլորտում կատարված աշխատանքների ամփոփում և 2019 թվականի ոլորտի վերաբերյալ պլանավորում: ԱԻ-ում գործելու | Հունվար | Նախարարի տեղակալ | Զորահավաքային բաժին | Նախարարություն | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | և ՔՊ պլանների ու փաստաթղթերի ճշգրտում | | | | | |
| 4.2 | «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և ՔՊ հիմնահարցերով Նախարարության աշխատակիցների ուսուցման ծրագրի» մշակում | Մինչև 31.01 | Նախարարի տեղակալ | Զորահավաքային բաժին | Զորահավաքային բաժնի աշխատակիցներ, ՔՊ շտաբ | Համաձայն Կառավարության 22.01.2015թ. N46-Ն որոշման |
| 4.3 | 2019 թվականի ՔՊ ոլորտում կատարվածաշխատանքների ամփոփում և տեղեկատվության կազմում ու ներկայացում ԱԻՆ | մինչև 01.12 | Նախարարի տեղակալ | Զորահավաքային բաժին | Զորահավաքային բաժնի աշխատակիցներ | Համաձայն Կառավարության 26.10.2017թ N 45 արձանագրային որոշման |
| 4.4 | Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և ՔՊ ոլորտներին առնչվող 2020 թվականի հիմնական միջոցառումների պլանի համաձայնեցնում ԱԻՆ-ի հետ և հաստատում | Մինչև 20.12 | Նախարարի տեղակալ | Զորահավաքային բաժին | Զորահավաքային բաժնի աշխատակիցներ | Համաձայն Կառավարության 22.01.2015թ. N46-Ն որոշման |
| **5. ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ** | | | | | | |
| 5 | Մեթոդական և գործնական օգնության ցուցաբերում էներգահամակարգի ընկերությունների և մարզային էներգետիկ ոլորտի կազմակերպությունների պատասխանատուներին և ՔՊ էներգետիկայի մարզային ծառայությունների պետերին՝ ՔՊ պլանավորման փաստաթղերի մշակման և շտաբային ուսումնավարժությունների պլանավորման, կազմակերպման և անցկացման հարցերով. | 2019 թվականի ընթացքում | Նախարարի տեղակալ՝ ՔՊ շտաբի պետ | Զորահավաքային բաժին | Նախարարություն և էներգահամակարգի ընկերություններ | Համաձայն Կառավարության 10.04.2003թ. N 384-Ն որոշման |